ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հունիսի 2016թ. թիվ 190-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ «ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ» ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 12.02.2016թ. թիվ 45-Ա որոշմամբ հաստատված «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման» ծրագրի՝ ըստ համայնքների ֆինանսական միջոցների բաշխման, ծրագրերի ուղղվածության, ծրագրերի իրականացման և ներկայացման ժամկետների ժամանակացույցը, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզի Գարգառ և Փամբակ համայնքների ղեկավարների կողմից ներկայացված ծրագրերը և ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի 24.06.2016թ. թիվ 5 նիստի արձանագրությունը /կցվում են/՝

Ո ր ո շ ու մ ե մ.

Հաստատել Գարգառի համայնքապետարանի կողմից ներկայացված «Գարգառ համայնքի գերեզմանոցի ճանապարհի վերանորոգում, ջրահեռացման ապահովում, գերեզմանոցի տարածքի բարեկարգում» և Փամբակի համայնքապետարանի կողմից ներկայացված «Փամբակ համայնքի գերեզմանատան ցանկապատի վերանորոգում, տարածքի բարեկարգում» ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. հունիսի 24
ք.Վանաձոր